ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ջերմորեն շնորհավորում եմ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներին, դասախոսներին և ղեկավարությանը ճեմարանի հիմնադրման 130-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հայաստանում գործող ամենահին բարձրագույն ուսումնական հաստատությունը բացառիկ է իր հարուստ փարեգրությամբ: Նրա էջերը արտացոլումն են մեր ժողովրդի վերջին 130 տարվա հոգևոր, կրթամշակութային կյանքի պատմության:

Գևորգյան Ճեմարանը կրթել և ասպարեզ է հանել հայ հոգևորականության և մտավորականության բազմաթիվ սերունդներ: Նրանց անձնվեր ծառայությունը և հայրենանվեր գործունեությունը վեր է ամեն մի գնահատականից:

Ճեմարանի պատերից ներս ձևավորվել է մեր ժողովրդի հպարտությունը կազմող հոգևորականների, գիտնականների, արվեստագետների, քաղաքական գործիչների մի երևելի բանակ: Դա մի առաքելություն էր, որ ճեմարանը կատարեց պատմական ծանրագույն իրավիճակներում:

Կրկին շնորհավորելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներին, դասախոսներին և ղեկավարներին՝ մաղթում եմ հաջողություններ ազգանվեր գործունեության մեջ: Մաղթում եմ, որ նոր շրջանավարտներն արժանի լինեն նախորդների անվանն ու գործին:

Երևան,
6 նոյեմբերի 2004 թ.